

նայք մեծամեծք եւ յոյժ բարձր՝ երեք չորս  
 տապաղայ, որ Ստամպոլ եւ ծովն կէմէսանով  
 480 առջեւն կ'երեւի իրրեւ զխնձոր: Անդ են  
 վայելք եւ հեշտութիւնք եւ ուրախութիւնք  
 մարմնաւոր կենացս բերկրանաց: Այլ եւ ծո-  
 վային ձկունք զանազանք եւ անուշահամք,  
 խայվարք ազգ եւ ազգ, եւ չոր թուխու ձուկ,  
 485 նարինձ, լիմօն, ձէթ եւ ձիթապտուղ լաւ եւ  
 ազնիւն անդ գտանի: Այլ եւ յոյժ բարելի է  
 Ղալաթան. ասեն թէ ի սմանէ եւ ի Մըրայ  
 լիանայ քաղաքն Ստամպոլ. խաչախառք, կա-  
 րէվիա, միտիայ եւ այլ համեղ կերակուրք  
 490 անտի ելանեն: Ձի թէ այս երկու քաղաքս  
 չէր, սովալլուկ լինէր Ստամպոլ ի բազմու-  
 թենէ մարդկան: Ձի քսան մղոն է պարսպին  
 բոլորն լայնանիստ եւ ընդարձակ եւ մեծ  
 յոյժ. Եօթն մեծ լեառն կայ ի նա, որպէս  
 495 Եօթն մեծ քաղաք, հինգ տիքմատաշ, եւ  
 Եօթն դուլայ:

ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԻՆ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ

Եւ ասին թէ կայ ի Ստամպոլ ԽՈՒ Հըէի  
 տուն եւ ԽՈՒ տուն Հոռմի. ԺՈՒ տուն Հայի,  
 բայց Տաճկաց հաշիւ եւ համար չկայ. ՁՈՒ  
 500 խանութ կայ. ԼՈՒ մէհանայ: Թող գմէջիթ-  
 նին, հիւրանոցնին, վախճնին, մէտրատա-  
 նին, ճումպանին, թէմպէլխանանին, հիւան-  
 դանոցնին, աշխանանին, մուտպախնին, պէ-

486 բարէլի: — 490 անդի: — 502 հիւանտա-  
 նոցնին: